

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 դեկտեմբերի 2009 թվականի N 1501-Ն

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԵՆՈՐՀՎԱԾ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ, ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԴԱՄԱՑԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՀԵՍՏԱԶՈՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

- 1. Մահմանել զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում շնորհված զինվորական կոչումների, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կոչումների, դատախազության դասային աստիճանների, ինչպես նաև պահեստազորում ունեցած կոչումների համապատասխանությունը ոստիկանության կոչումներին համաձայն հավելվածի:
- 2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում շնորհված զինվորական, քրեակատարողական ծառայության հատուկ կոչումները, դատախազության դասային աստիճանները, ինչպես նաև պահեստազորում ունեցած կոչումները ոստիկանության կոչումներին համապատասխանեցնելու մասին» N 1420-Ն որոշումը:
- 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

S. Մարգարյան

2009 թ. դեկտեմբերի 28

Երևան

Հավելված

ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1501-Ն որոշման

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԵՆՈՐՀՎԱԾ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ, ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԴԱՄԱՑԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՀԵՍՏԱԶՈՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻՆ

Ոստիկանության կոչումները	Զինված ուժերում շնորհված զինվորական կոչումները	Ազգային անվտանգության ծառայությունում շնորհված զինվորական կոչումները	Քրեակատարողական ծառայությունում շնորհված հատուկ կոչումները	Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում շնորհված կոչումները	Դատախազության համակարգում շնորհված դասային աստիճանները	Զինված ուժերի պահեստազորի կոչումները
1	2	3	4	5	6	7
ոստիկանության գեներալ-գնդապետ	գեներալ-գնդապետ	գեներալ-գնդապետ	-	-	արդարադատության առաջին դասի պետական	պահեստազորի գեներալ-գնդապետ

						խորհրդական	
նստիկանության գեներալ-լեյտենանտ	գեներալ-լեյտենանտ	գեներալ-լեյտենանտ	-	-	արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական	պահեստագործի գեներալ-լեյտենանտ	
նստիկանության գեներալ-մայոր	գեներալ-մայոր	գեներալ-մայոր	արդարադատության գեներալ-մայոր	արդարադատության գեներալ-մայոր	արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական	պահեստագործի գեներալ-մայոր	
նստիկանության գնդապետ	գնդապետ	գնդապետ	արդարադատության գնդապետ	արդարադատության գնդապետ	արդարադատության առաջին դասի խորհրդական	պահեստագործի գնդապետ	
նստիկանության փոխգնդապետ	փոխգնդապետ	փոխգնդապետ	արդարադատության փոխգնդապետ	արդարադատության փոխգնդապետ	արդարադատության երկրորդ դասի խորհրդական	պահեստագործի փոխգնդապետ	
նստիկանության մայոր	մայոր	մայոր	արդարադատության մայոր	արդարադատության մայոր	արդարադատության երրորդ դասի խորհրդական	պահեստագործի մայոր	
նստիկանության կապիտան	կապիտան	կապիտան	արդարադատության կապիտան	արդարադատության կապիտան	առաջին դասի խորհրդական	պահեստագործի կապիտան	
նստիկանության ավագ լեյտենանտ	ավագ լեյտենանտ	ավագ լեյտենանտ	արդարադատության ավագ լեյտենանտ	արդարադատության ավագ լեյտենանտ	երկրորդ դասի խորհրդական	պահեստագործի ավագ լեյտենանտ	
նստիկանության լեյտենանտ	լեյտենանտ	լեյտենանտ	արդարադատության լեյտենանտ	արդարադատության լեյտենանտ	երրորդ դասի խորհրդական	պահեստագործի լեյտենանտ	
նստիկանության կրտսեր լեյտենանտ	-	-	-	-	-	պահեստագործի կրտսեր լեյտենանտ	
նստիկանության ավագ ենթասպա	ավագ ենթասպա	ավագ ենթասպա	արդարադատության ավագ ենթասպա	-	-	պահեստագործի ավագ ենթասպա	
նստիկանության ենթասպա	ենթասպա	ենթասպա	արդարադատության ենթասպա	-	-	պահեստագործի ենթասպա	
նստիկանության ավագ	ավագ	-	արդարադատության ավագ	-	-	պահեստագործի ավագ	
նստիկանության ավագ սերժանտ	ավագ սերժանտ	-	արդարադատության ավագ սերժանտ	-	-	պահեստագործի ավագ սերժանտ	
նստիկանության սերժանտ	սերժանտ	-	արդարադատության սերժանտ	-	-	պահեստագործի սերժանտ	
նստիկանության կրտսեր սերժանտ	կրտսեր սերժանտ	-	արդարադատության կրտսեր սերժանտ	-	-	պահեստագործի կրտսեր սերժանտ	

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար Ռ. Մարգարյան